

պատմութեան մէջ անուանի Պոօշեանց տոհմէն¹. եւ արեւնական կապ մ'ունեցած կը թուի Քրդարու բանաստեղծ խաչատուր Կեչառուեցոյ հետ²: Ծնունդն պէտք է զետեղել Քե դարու երկրորդ կիսուն հաւանականաբար: Ծնողաց անունները յայտնի չեն, բայց ունեցած է նաեւ եղբայրներ, զորոնք իւր մէկ յիշատակարանին մէջ յիշել կը ինզրէ:

2. Բարձրագոյն դաստիարակութիւնն եւ ուսումներն առած է առ ոտս Յովսէփի, Եսայի եւ Գրիգոր վարդապետաց:

Յովսէփի վարդապետ ապահովապէս այն Յիշատակագիրն է, որուն ձեռքէն գրուած կը յիշատակէ Հ. Պոտուրեան³ երկու յիշատակարան յամէ 1512 «ձեռամբ անիմաստ գրչի Յովսէփի»: Ասոր ձեռքէն է անշուշտ նաեւ այն

1 Այս եւ յաջորդ կենսագրական ծանօթութիւնքս մեծաւ մասամբ կը քաղենք Ջաքարիայի յիշատակարաններէն, զորոնք ունինք Ստոյն Կալիսթենեայ Աղեքսանդրի վարուց երկու ինքնագիր Չեռագրաց մէջ: Հմմտ. այս մասին առ այժմ Հ. Յ. Տալեան՝ Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի. Ալեքնա 1892, էջ 90 եւն:

2 Չեռ. Մատենագարանիս, Թ. 98, Թ. 74ա. (Հմմտ. Տալեան՝ անդ, 125). «Որք լւէք զաղիողորմ բարաւնութիւնս՝ զարմարող սորին յՍաւադուր Կիւսուրեան, է-է ունի լուսաւիղ Ջաքարիայ Եղիշիպոս՝ գծողս եւ նկարողս Աղէկոսանդր գրոցս յիշել է Տէր:»

Եւ այլուր նոյն Չեռագրին մէջ (անդ. Թ. 25բ). «Չվարդապետն աստուածազարդ, զխաչատուրըն Կեչառեցի, 'ւ է լառաւիղէ նորին՝ Ջաքարիայ ախմար Գընունցի, Բազում ջանիւ նորոգել զյիշատակ հարանցն իմ նախնի:»

3 ԲՁՄ. 1905, էջ 492: